

Վիճակագրական արտադրանք – Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտ
 /Երկաթուղային տրանսպորտ (ամսական, տարեկան)/

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<i>Կարիքների ձևակերպում</i>		
	1.1 Կարիքների բացահայտում	Հաշվի առնելով Արմատատի կողմից Էներգետիկ հաշվեկշռի վիճակագրության վարման անհրաժեշտությունը 2015 թվականից ներդրվել է «Ուղևորների և բեռների փոխադրումների հետ կապված էլեկտրաէներգիայի ծախսի» վերաբերյալ ցուցանիշը:
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	Նոր ցուցանիշի վիճակագրական հաշվետվական ձևում ներառելու անհրաժեշտության հետ կապված խորհրդատվություններ են տրամադրվել «Ցածր ածխածնային զարգացման ռազմավարությունների համար հզորությունների ընդլայնում» (EC-LEDS) ԱՄՆ ՄՁԳ-ի շրջանակներում «Տետրա Տեկ Ի Էս, Ինկ.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան փորձագետների կողմից: Անհրաժեշտ խորհրդատվություններ ու աշխատանքային քննարկումներ են իրականացվել նաև Եվրամիության Էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցության «Ինոգեյթ (INOGATE) տեխնիկական աջակցության ծրագրի», Արմատատի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև 02.07.2013թ. կնքված եռակողմ փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: Տեղեկատվության հավաքման հետ կապված պարզաբանումներ տրամադրելու նպատակով աշխատանքային քննարկումներ են իրականացվել վիճակագրական տեղեկատվություն ներկայացնող համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:
	1.3 Արտադրանքի նպատակների սահմանում	Պարբերաբար ուսումնասիրվում է վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կարծիքը՝ կապված Արմատատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերի հետ՝ ինչպես առաջարկվող նոր ցուցանիշների ընդգրկման, այնպես էլ առկա ցուցանիշների վերաբերյալ նրանց

		վերաբերմունքի, ակնկալիքների ու պահանջումների բացահայտման նպատակով: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության օգտագործողների կարծիքների ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նրանց հետ աշխատանքային քննարկումների անցկացման, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության հարցաթերթի» միջոցով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=131 հղումը):
	1.4 Հասկացությունների որոշում	Ցուցանիշների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ-ում էներգահաշվեկշռի կազմմամբ ու ներդրմամբ, ինչը մեծ և աճող պահանջ ունի վիճակագրական տեղեկատվության օգտագործողների շրջանում:
	1.5 Տվյալների առկայության ստուգում	Տվյալների հավաքումն իրականացվում է վիճակագրական հաշվետվական ձևերի միջոցով՝ համապատասխան տարեկան ու հնգամյա վիճակագրական ծրագրերի: Տեղեկատվության հավաքման համար առկա չեն այլ վարչական և ոչ վիճակագրական աղբյուրներ:
	1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում	Մինչ վիճակագրական հաշվետվական ձևերի ընդունումը ՀՀ ՎՊԽ կողմից և ՀՀ արդարադատության նախարարության կողմից դրանց պետական գրանցումը, որպես նորմատիվ իրավական ակտ, իրականացվում է դրանցում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգների մասով աշխատանքային քննարկումներ տարբեր շահագրգիռ մարմինների, գիտական կազմակերպությունների, օգտագործողների հետ, ինչպես նաև հաշվի է առնվում միջազգային փորձագետների կարծիքը:
	<i>Նախագծում</i>	
	2.1 Արդյունքների նախագծում	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019թ. փետրվարի 19-ի «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին», 2019թ. փետրվարի 19-ի «Ընդհանուր օգտագործման

		երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» վիճակագրական հաշվետվական ձևերը և դրանց լրացման հրահանգները հաստատելու մասին համապատասխանաբար թիվ 06-Ն և թիվ 10-Ն որոշումների հիման վրա:
	2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում	<p>Վիճակագրական ցուցանիշների հավաքման համար հաստատված է 2 վիճակագրական հաշվետվական ձև՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ամսական, որը ներառում է թվով 74 վիճակագրական ցուցանիշներ 2. տարեկան, որը ներառում է թվով 36 վիճակագրական ցուցանիշներ <p>Ցուցանիշների հավաքման նպատակով կիրառվում է Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրությունը (ՀՀ էկոնոմիկայի նախարարի N 1579-Ն 10.12.2019թ. հրաման ՀՀ ՔՏ 04.11.2013թ. 30/ (474).1) (տես՝ https://www.armstat.am/am/?nid=370 հղումը):</p>
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված վիճակագրական հաշվետվական ձևերի միջոցով: Տեղեկատվության հավաքումն իրականացվում է համատարած դիտարկման եղանակով:
	2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում	Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է ոլորտի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով: Այդ նպատակով իրականացվում է նախապես հայտնի երկաթուղային տրանսպորտի ոլորտի կազմակերպությունների գործունեության փաստի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ բոլոր հնարավոր աղբյուրներից, որին անմիջապես հետևում է այդ կազմակերպությունների իրազեկումը վիճակագրական դիտարկման դաշտ ընդգրկվելու վերաբերյալ, ապա համապատասխան վիճակագրական տեղեկատվության հավաքումը: Ընտրանքի նախագծման անհրաժեշտություն առկա չէ:
	2.5 Մշակման և վերլուծության նախագծում	Տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, որոնց հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան կազմակերպությունների հետ կապ հաստատելու միջոցով, իրականացվում են համապատասխան ճշգրտումներ: Ցուցանիշների վերաբերյալ ոչ արժանահավատ, թերի կամ

		աղավաղումներով տեղեկատվության ներկայացման դեպքում համաձայն ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի» 169.2 հոդվածի պահանջների ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ստուգման գործընթաց, որի արդյունքում ճշգրտման են ենթարկվում ցուցանիշների վերաբերյալ նախորդող ժամանակաշրջանի տվյալները:
	2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում	Տեղեկատվության հավաքումից մինչև դրանց հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված ռեսպոնդենտներին համապատասխան իրազեկումներով ապահովելու, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ:
<i>Կառուցում</i>		
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	Տեղեկատվության հավաքման իրականացման և դրա համար անհրաժեշտ վիճակագրական հաշվետվական ձևերը և դրանց լրացման հրահանգներն առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տեսքով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=547 հղումը):
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային փաթեթներում (Microsoft Office Excel) առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի:
	3.4 Գործընթացների կարգավորում	Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝ <ol style="list-style-type: none"> 1. տեղեկատվության հավաքում, 2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ, 3. տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով (Microsoft Office Excel

		<p>ծրագրային փաթեթ),</p> <p>4. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ,</p> <p>5. տեղեկատվության տարածում ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ տարեգրքերում, տեղեկատվական զեկույցներում, վիճակագրական ժողովածուներում, ինչպես նաև տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում պաշտոնական պատասխան գրությունների միջոցով:</p>
	3.5 Արտադրության համակարգի փորձարկում	Պայմանավորված վիճակագրական հաշվետվական ձևերում ցուցանիշների փոփոխությունների հետ մուտքագրման ծրագրային փաթեթները պարբերաբար ենթարկվում են համապատասխան փոփոխությունների: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ծրագրային փաթեթների թեստավորում:
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	Ցուցանիշի վիճակագրական հաշվետվական ձևերում ընդգրկմանը զուգահեռ իրականացվում է վերջինիս դաշտային փորձաքննություն՝ պարզելու ռեսպոնդենտների կողմից ցուցանիշի տրամադրման հնարավորությունները, ինչպես նաև փորձարկելու դրա նկատմամբ նրանց ընկալումը:
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Իրականացվում են վիճակագրական հաշվետվական ձևերում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների կազմում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողներին (ռեսպոնդենտներին): Ամփոփվում են տեղեկատվություն ներկայացնողների հետ ցուցանիշների վերաբերյալ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունները:
	<i>Հավաքում</i>	
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	Տեղեկատվության հավաքման համատարած դիտարկման արդյունքում ձևավորվում է տեղեկատվության գլխավոր համակցությունը, որն իր մեջ ներառում է երկաթուղային տրանսպորտի գործունեությամբ զբաղվող բոլոր կազմակերպություններից հավաքված վիճակագրական տեղեկատվությունը:
	4.2 Հավաքման կազմակերպում	Վիճակագրական տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա նախապես հայտնի կազմակերպությունների քանակին

		<p>համապատասխան վիճակագրական հաշվետվական ձևերի և ըստ անհրաժեշտության դրանց լրացման հրահանգների տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն և բաշխում համապատասխան կազմակերպություններին:</p> <p>Միաժամանակ բոլոր վիճակագրական հաշվետվական ձևերն ու դրանց լրացման հրահանգները հասանելի են նաև Արմստատի պաշտոնական կայքում:</p> <p>Առկա են էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների հավաքման համար անհրաժեշտ ցանցային միջոցներ:</p>
	4.3 Հավաքման իրականացում	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է Արմստատի կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման միջոցով՝ առձեռն, փոստի և էլեկտրոնային համակարգի միջոցներով համաձայն 20.06.2016թ. ՀՀ ՎՊԽ «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման:</p>
	4.4 Հավաքման վերջնականացում	<p>Հավաքված տեղեկատվությունը թվաբանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունն էլեկտրոնային միջավայր անմիջապես ներմուծելու եղանակով:</p>
	<i>Մշակում</i>	
	5.1 Տվյալների ինտեգրում	<p>Իրականացվում է Արմստատի կենտրոնական ապարատի կողմից ստացվող համապատասխան տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, որի արդյունքում բացառվում են կրկնությունները:</p>
	5.2 Դասակարգում և կոդավորում	<p>Իրականացվում է ըստ կազմակերպության գործունեության հիմնական տեսակի կոդավորման աշխատանքներ համաձայն Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչի (NACE, rev 2), ինչպես նաև մարզային և տարածքային միավորների կոդավորում՝ համաձայն նախապես սահմանված կարգի:</p>
	5.3 Վերանայում և հաստատում	<p>Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաճշտում, ինչպես նաև ոչ ճիշտ կոդավորված տեղեկատվության համապատասխանեցում</p>

		նախապես հաստատված դասակարգիչների պահանջներին: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև կազմակերպությունների պետական ռեգիստրում գրանցման, նույնականացման և հարկային մարմնում գրանցման համապատասխան կողերի վավերացում՝ օգտագործելով Արմստատի կողմից վարվող բիզնես ռեգիստրի և որպես վարչական տեղեկատվության աղբյուր օգտագործվող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությունը:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Իրականացվում է բացակայող տեղեկատվության համալրում ցուցանիշների նախորդ ժամանակահատվածի վերաբերյալ ներկայացված տվյալներով՝ դրանց վերաբերյալ այլընտրանքային տեղեկատվության բացակայության դեպքում: Համալրված տեղեկատվությունը հաջորդող ժամանակահատվածում տվյալների առկայության պարագայում ենթակա են ճշգրտման:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար առկա չեն:
	5.6 Կշիռների հաշվարկում	Քանգի երկաթուղային տրանսպորտի գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը ապահովում է այդ ոլորտի վիճակագրության ամբողջականությունը, հետևաբար լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Հաճախ, ելնելով օպերատիվ վիճակագրական տվյալների ստացման անհրաժեշտությունից, նախնական տեղեկատվության հիման վրա կատարվում է նախնական ցուցանիշների հաշվարկ, որոնք հետագայում ենթակա են ճշգրտման:
	<i>Վերլուծություն</i>	
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	Ստացված ամփոփ տեղեկատվության հիման վրա իրականացվում է վիճակագրական ցուցանիշների խմբավորումների, ինդեքսների, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում: Մասնավորապես,

		<p>հաշվարկվում են երկաթուղային տրանսպորտի հիմնական ցուցանիշները՝ ուղևորափոխադրում (հազ. մարդ), բեռնափոխադրում (հազ. տոննա), դրանցից ստացված հասույթներ (մլն. դրամ), ինչպես նաև օժանդակ և լրացուցիչ գործունեությունից հասույթ (մլն. դրամ), ուղևորաշրջանառություն (մլն. ուղևոր-կմ) և բեռնաշրջանառություն (մլն. տոննա-կմ): Ստացված ցուցանիշների հաշվարկն օգտագործվում է նաև ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի կազմակերպությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացման, ինչպես նաև ցուցանիշների դինամիկ շարքերի կառուցման համար:</p>
	6.2 Արդյունքների վավերացում	<p>Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և վիճակագրական հաշվետվական ձևերի լրացման հրահանգների:</p>
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	<p>Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով տնտեսությունում տեղի ունեցող տարաբնույթ երևույթների ազդեցությունը նշված ոլորտի վրա:</p>
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	<p>Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց զերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ http://www.armstat.am/file/doc/99454478.pdf հղումը):</p>
	6.5 Արդյունքների վերջնականացում	<p>Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումը իրականացվում է երկաթուղային տրանսպորտի վերաբերյալ ամփոփ ցուցանիշների վերլուծություն՝ ըստ դրանց դինամիկ շարքերի, ինչպես նաև տրանսպորտի այլ տեսակների համապատասխան ցուցանիշների հետ համեմատության միջոցով:</p>
	<i>Տարածում</i>	
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	<p>Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների պատրաստում և</p>

		<p>վերջնական ճշգրտման աշխատանքներ, ինչպես նաև կատարվում է դինամիկ շարքերի արդիականացում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:</p>
	<p>7.2 Տարածման արտադրանքների արտադրում</p>	<p>Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի, վիճակագրական ժողովածուների և տեղեկատվական ամսական զեկույցների միջոցով.</p> <ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (տես՝ https://www.armstat.am/am/?nid=586 հղումը): 2. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=80&id=2203 հղումը): 3. Հայաստանը թվերով (տարեկան) (տես՝ https://www.armstat.am/am/?nid=80&id=2219 հղումը): 4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (ամսական) (տես՝ https://www.armstat.am/am/?nid=82 հղումը):
	<p>7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:</p>
	<p>7.4 Տարածման արտադրանքների խթանում</p>	<p>Արմստատի պաշտոնական կայքում ներկայացված տարատեսակ տեղեկատվությունը (ցուցանիշներ, մեթասովյալներ, իրազեկումներ, ոլորտի վերաբերյալ նորություններ, տվյալների բազաներ և այլն) ոչ միայն միջոց է վիճակագրական, այլ նաև՝ Արմստատի գործունեության վերաբերյալ տեղեկատվության</p>

		տարածմանը, ինչը խթանում է ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացմանը:
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չիրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
	<i>Գնահատում</i>	
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	Ըստ անհրաժեշտության իրականացվում է միննույն աղբյուրից և/կամ համապատասխան կազմակերպությունների վերաբերյալ վարչական ռեգիստրներից ստացվող տեղեկատվության հավաքում՝ համեմատություններ իրականացնելու նպատակով:
	8.2 Գնահատման իրականացում	Վիճակագրական ցուցանիշների որակի կառավարման տեսանկյունից իրականացվում են միննույն աղբյուրից ստացվող, տարբեր հաշվետվական ձևերում արտացոլված միննույն կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության համեմատություններ: Տեղեկատվության որակի գնահատման համար տեղեկատվական հիմք են հանդիսանում նաև վարչական ռեգիստրները, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի և/կամ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող համապատասխան տեղեկատվությունը:
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	Համեմատվող միննույն ցուցանիշի վերաբերյալ, տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում իրականացվում է դրանց հնարավոր պատճառների բացահայտում, որի հիման վրա իրականացվում են համապատասխան վերջնական ճշգրտման աշխատանքներ: